

## ԿՈՒՐԱՊԵՏԻՆ

\* \* \* \* \*

Կուրապետն երկու երեք մատնաշափ մեծութեամբ, պղտիկ մնացորդ մըն է — թերեւս մեր նախահայրերէն — որովայնին աջ կողմը և լայն աղիքին կպած այս թղուկ աղիքը մարդկութեան փորձանքներէն մէկն է, ինչպէս պատուհաս մըն են նշագեղձերը (ալատէմթիք) բերանին մէջ. Ո՞չ մէկը և ո՞չ միւսը պաշտօն ունին, թէեւ կարեռզներ կան թէ նշագեղձերը դեր ունին — իրենց գիտնալիք բանն է անշուշտ Մենք միայն զիտենք, և իրականութիւննը լոյսի պէս պայծառ է, թէ անոնք բորբոքումի տեսակէտով զիրար կը գերազանցեն և լուրջ բարգութիւններով կը սպառնան կեանքերու՝ առանց պղտիկի ու մեծի խտիր գնելու:

Բարեբախտաբար ներկայ զիրաբուժական նշգրակն ու մեթուները ա՛յնքան ապահով են, որ ո՞չ մէկ վասնգ կը պատահի անոնց յաջողապէս արմատախմբան պահուն: Որովայնահատութեան գործողութիւններու ընթացքին, կուրապետն բորբոքած ըլլայ կամ ոչ, կը կտրեն ու կը նետեն, ապազայ բարգութիւնները կանխելու համար կտրուկ և գովելի միջոց ...:

Ո՞չ մէկ գործարան մարդկային մարմինին մէջ, պարապ տեղը ա՛յնքան չեն տառապեցուցած՝ որքան ստամոքսը: Փորի բոլոր ցաւերը անոր վրայ կը բարգութիւն Բայց հիմա խնդիրը փոխուած է, այդ ցաւերուն 100էն 85ը կուրապետն և մաղձապարկի բորբոքման կուտան և շատ իրաւամբ «Զուր առած»ները, «Գորտը ինկած»ները ի՞նչ էին արգեօք, որոնք, մեր խելացի Դաւիթներուն, մամիկններուն թերանին մէջ կը դառնային շարունակ: Զարմանալու ոչի՞նչ կայ: Ամերիկայի մէջ, 80նոց Հայ մը այդօրինակ ծանուցումներով յաճախորդ կ'որսայ գեռ: Ի՞նչպէս «կը դարմանեն» անոնք Խիթերէ տառապողներուն փորը կը չփեն, տաք տաք լափաներ կը դնեն անոնց վրայո Հետեւանքը մէկտ այն կ'ըլլայ, որ ենթակաները շուտով կը չուեն յաւիտենականութիւն:

Խեղճ ստամոքսը բանէ լուր չունի նմանօրինակ պարագաներու մէջ: Զմռոնանք կուրապին: Ո՞չ շփում, ո՞չ լսիա, ո՞չ գրեխ, ո՞չ լուծողական: Եւ այս՝ ամէն մարդ պէտք է առակի պէս զոց սորզի: Կատարեալ հանգիստ: Ախտածանաշոււած օրն իսկ հիւանդը պէտք է վիրաբոյժին նշգրակին տակ զանուիր կուրապիին վրայ սառ գնելով գործողութիւնը անտնացնել լաւ բան չէ, և արմատական չէ, կրակի հետ խաղալ է: Սուր բորբոքումը անցնելէ ետք գործողութիւն թերագրողները սիալ կը գործեն: Շատ քիչ, չնչին բացառութիւններ կան՝ եթէ իրօք կան: Բայց ներկայ զիրաբուժական հաւատոյ հանգանակը — զէթ ամերիկեանը — 24 ժամուան ընթացքին գործողութիւն ընելն է: Եւ անոնք իրաւունք ունին: Բժ. ԳԵՂԱՄ ՍԵՐՈԲԵԱՆ